Սոցիալական Ապահովության Համարներ

Բովանդակություն

Ներգաղթողի կարգավիճակ՝	2
Աշխատանքի Իրավասություն՝	2
Տարիք՝	3
Ինքնության հաստատում	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Արդյո՞ք Դուք ժամանակավորապես գտնվում եք Միացյալ Նահանգներում, որպեսզի հաճախեք քոլեջ, լեզվական, մասնագիտական կամ ոչ ուսումնական դպրոց՝ **F-1**, **M-1,** կամ **J-1** ոչ ներգաղթողի ուսանողական դասակարգմամբ: Ձեր դպրոցը կարող է հարցնել Ձեր Սոցիալական Ապահովության համարը: Որոշ քոլեջներ և դպրոցներ օգտագործում են Սոցիալական Ապահովության համարները որպես ուսանողների ինքնության համարներ: Եթե Դուք չունեք Սոցիալական Ապահովության համար, ապա քոլեջը կամ դպրոցը պետք է կարողանա Ձեզ մեկ այլ ինքնության համար տրամադրել:

Սոցիալական Ապահովության համարները սովորաբար հատկացվում են այն անձանց, որոնք լիազորված են աշխատելու Միացյալ Նահանգներում: Սոցիալական Ապահովության համարի միջոցով անհատների աշխատավարձերը հայտարարագրվում են կառավարությանը, և որոշվում է անհատի՝ Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու իրավասությունը: Սոցիալական Ապահովությունը չի հատկացնի Ձեզ որևէ համար՝ պարզապես քոլեջ կամ դպրոց ընդունվելու նպատակով:

SocialSecurity.gov

(շրջել)

Եթե Դուք ցանկանում եք աշխատանք ձեռք բերել ուսանողական քաղաքում (campus), ապա Դուք պետք է դիմեք միջազգային ուսանողների գծով նշանակված Ձեր դպրոցի պաշտոնատար անձին: Տվյալ պաշտոնատար անձը կարող է ասել Ձեզ, թե արդյո՞ք Դուք իրավասու եք աշխատելու ուսանողական քաղաքում և տեղեկատվություն տրամադրել հասանելի աշխատատեղերի վերաբերյալ: Ինչպես նաև, Ձեր դպրոցը կարող է հավանություն տալ ուսանողական քաղաքից դուրս որոշակի սահմանափակ աշխատանքի համար՝ ինչպես թույլատրված է Ներքին Անվտանգության Նախարարության (Department of Homeland Security (DHS)) **կանոնակարգերով: Եթե Ձեր դպրոցը լիազորել է Ձեզ աշխատելու կա՛մ ուսանողական քաղաքի սահմաններում, կա՛մ դրանից դուրս, և Դուք համապատասխանում եք Սոցիալական Ապահովության իրավասության պահանջներին, ինչպես նկարագրված է հաջորդ բաժնում, ապա Դուք կարող եք Սոցիալական Ապահովության համար ստանալ:**

Սոցիալական ապահովության համարանիշ ստանալու համար հիմնականում կարող են դիմել միայն DHS աշխատանքի թույլտվություն ունեցող ոչ ռեզիդենտ անձիք: Մենք խորհուրդ ենք տալիս սոցիալական ապահովության համարանիշ ստանալու համար դիմելուց միայն 48 ժամ հետո հաղորդել այդ մասին ձեր դպրոցին: Այս հապաղումը կօգնի մեզ ճշտել ձեր DHS ներգաղթյալի կարգավիճակը:

Ձեր Սոցիալական Ապահովության տեղամասային գրասենյակում Սոցիալական Ապահովության համարի համար դիմելու նպատակով՝

- Լրացրե՛ք Սոցիալական Ապահովության քարտի դիմումի ձևը; և
- Ցույց տվե՛ք մեզ փաստաթղթեր, որոնք կհավաստեն Ձեր՝
  - — Աշխատանքի թույլտվությամբ ներգաղթողի կարգավիճակը;
  - — Տարիքը: և
  - — Ինքնությունը;

Ներգաղթողի կարգավիճակ՝

Ձեր ներգաղթողի կարգավիճակը հավաստելու նպատակով՝ Դուք պետք է ցույց տաք մեզ Ձեր ընդունման ներկայիս կնիքը (admission stamp) Ձեր վավերական արտասահմանյան անձնագրում և Ժամանման/Մեկնման Գրանցումը (*Arrival/Departure Record*) (Ձևաթուղթ I-94), առկայության դեպքում: Եթե Դուք հանդիսանում եք F-1 կամ M-1 ուսանող, ապա Դուք նույնպես պետք է մեզ ներկայացնեք Ձեր Իրավասության Վկայականը Ոչ ներգաթող Ուսանողի Կարգավիճակի համար (*Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status*) (Ձևաթուղթ I-20): Եթե Դուք հանդիսանում եք J-1 փոխանակման ծրագրով այցելու, ապա Դուք պետք է մեզ ներկայացնեք Ձեր Իրավասության Վկայականը Փոխանակման Այցելուի Կարգավիճակի համար (*Certificate of Eligibility for Exchange Visitor Status*) (Ձևաթուղթ DS-2019):

Աշխատանքի Իրավասություն՝

Եթե Դուք հանդիսանում եք F-1 ուսանող և իրավասու եք աշխատելու ուսանողական քաղաքում, ապա Դուք պետք է նամակ ներկայացնեք Ձեր դպրոցի համար նշանակված պաշտոնատար անձի անունից, որտեղ՝

- Հաստատվում է Ձեր ինքնությունը;
- Հաստատվում է դպրոցում Ձեր ներկայիս կարգավիճակը; և
- Հաստատվում է Ձեր գործատուի ինքնությունը և Ձեր կողմից կատարվող կամ կատարվելիք աշխատանքի տեսակը:

(շրջել)

Մեզ նաև անհրաժեշտ է տեսնել տվյալ զբաղվածության որևէ հավաստիք, ինչպես օրինակ վերջերս վճարված աշխատավարձի հաշվարկային թերթիկը (pay slip) կամ նամակ Ձեր գործատուից: Ձեր անմիջական ղեկավարը պետք է ստորագրի և թվագրի զբաղվածությունը հավաստող նամակը: Տվյալ նամակում պետք է նկարագրված լինի՝

- Ձեր աշխատանքը;
- Ձեր աշխատանքի ընդունման ամսաթիվը;
- Ձեր աշխատանքային ժամացուցակը, որով Դուք աշխատում եք կամ աշխատելու եք;
- Ձեր անմիջական ղեկավարի անունը, ազգանունը և հեռախոսահամարը:

Եթե Դուք հանդիսանում եք F-1 ուսանող և իրավասու եք աշխատելու ուսումնական պրակտիկ դասավանդման (curricular practical training (CPT)) մեջ, ապա Դուք պետք է մեզ տրամադրեք Ձեր I-20 Ձևաթուղթը՝ զբաղվածության մասով լրացված էջով և ստորագրված Ձեր դպրոցի համար նշանակված պաշտոնատար անձի կողմից:

Եթե Դուք հանդիսանում եք F-1 կամ M-1 ուսանող և ունեք աշխատանքի թույլտվություն (Ձևաթուղթ I-766) DHS-ից, ապա Դուք պետք է ներկայացնեք այն:

Եթե Դուք հանդիսանում եք J-1 ուսանող, ուսանող փորձնակ (student intern) կամ միջազգային այցելու, ապա Դուք պետք է նամակ ներկայացնեք Ձեր հովանավորի կողմից: Նամակը պետք է գրված լինի հովանավորի պաշտոնական բլանկի վրա՝ բնօրինակ ստորագրությամբ, և լիազորի Ձեր զբաղվածությունը:

Մենք չենք կարող ընթացք տալ Ձեր դիմումին եթե՝

- Ձեր Ուսանողական քաղաքի կամ CPT աշխատանքը սկսվում է Ձեր դիմումում նշված ամսաթվից 30 օր անց; կամ
- DHS-ից ստացված աշխատանքի թույլտվության (Ձևաթուղթ I-766) վրա առկա աշխատանքի մեկնարկի ամսաթիվը գալիք ամսաթիվ է:

Տարիք՝

Դուք պետք է ներկայացնեք Ձեր արտասահմանյան ծննդյան վկայականը, եթե ունեք այն կամ եթե կարող եք ստանալ այն 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Դուք չեք կարող ներկայացնել Ձեր արտասահմանյան ծննդյան վկայականը, ապա, որպես Ձեր տարիքի հավաստիք, մենք կարող ենք դիտարկել այլ փաստաթղթեր, ինչպես օրինակ Ձեր անձնագիրը կամ DHS-ի կողմից թողարկված փաստաթուղթը:

Ինքնության հաստատում

Մենք ընդունում ենք ձեր ինքնությունը հաստատող միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց), պարունակի ձեր անունը, նույնականացման տվյալները և, ցանկալի է, նոր լուսանկարը: Սոցիալական ապահովությունը կպահանջի ձեր վավերական արտասահմանյան անձնագիրը՝ DHS ներգաղթի թույլտվության փաստաթղթերի հետ միասին:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն կա՛մ բնօրինակներ, կա՛մ դրանց թողարկող գործակալության կողմից հաստատված կրկնօրինակներ: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի լուսապատճեներ կամ նոտարական հաստատումով կրկնօրինակներ: Մենք նաև չենք կարող ընդունել որևէ ստացական, որը վկայում է Ձեր որևէ փաստաթղթի համար դիմելու փաստը: Մենք կարող ենք մեկ փաստաթուղթը օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք դիտարկել Ձեր ընդունման կնիքը Ձեր վավերական արտասահմանյան անձնագրում՝ և՛ որպես Ձեր աշխատանքի իրավասության, և՛ որպես Ձեր ինքնության հավաստիք:

Մենք չենք պահանջում, որպեսզի Դուք Սոցիալական Ապահովության համար ունենաք նախքան Ձեր աշխատանքի մեկնարկը: Այնուամենայնիվ, Հարկային Ծառայությունը (Internal Revenue Service)

(շրջել)

պահանջում է, որպեսզի գործատուները աշխատավարձերը հայտարարագրեն Սոցիալական Ապահովության համարի միջոցով: Մինչդեռ Դուք սպասում եք Ձեր Սոցիալական Ապահովության համարին, Ձեր գործատուն կարող է օգտվել մեր կողմից ուղարկված նամակից, որտեղ հաստատվում է, որ Դուք դիմել եք համարի համար: Ինչպես նաև Ձեր գործատուն կարող է օգտվել Ձեր ներգաղթման փաստաթղթերից՝ որպես Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվության հավաստիք: Գործատուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն գտնել առցանց՝ ***www.socialsecurity.gov/employer/hiring.htm*** կայքէջում:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

(շրջել)

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-10181-AM | August 2017
Սոցիալական Ապահովության Համարներ
International Students And Social Security Numbers (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: